https://doi.org/10.46991/hc.2023.20.2.031

An Episode from the History of the Armenian Kingdom of Cilica and Church Relations (1198-1219)

Nelli Zhamkochyan
https://orcid.org/0000-0001-6060-4728
Yerevan State University, Faculty of Theology, Department of Theology and History of the Armenian Church, Senior Laboratory Assistant, Ph.D Student
nelli.zhamkochyan.92@mail.ru

Keywords: *Cilicia, Church, Catholicos, King, administration, relations, period, clergy, bishop, history, historian.*

The article is to present the history of the relationships between the State and the Church during the early period of the Armenian Kingdom of Cilicia. According to the medieval historians, this study also refers to the issues of the role of the Armenian Church and its representatives in the spheres of State administration and the activities of the clergy, then the Armenian-Catholic, Armenian-Syriac and Armenian-Greek ecclesiastical relations to a certain extent. The article also mentions the reconciliation process between the ruler of Lambron and the Armenian Kingthrough the mediation of the Catholicos of Armenia.Taking into account the points of view in the scientific literature, the details of the election of the Catholicos of Armenia in 1203, as well as the role of the royal elite of Cilicia in electing a new patriarch, the divisive steps of Bishop Anania of Sebastia are also presented in the study. The article gives certain details of the economic assistance provided by Levon Metsagorts (Levon the Magnificent) to the Armenian Apostolic Church, and the history of the aggravation of the relations between Levon Metsagorts and Armenian Catholicos Hovhannes Ssetsi,as well as their reconciliation.As a result of their relations, tension was created for a long time in the relations between the State and the Church. Thus, Hovhannes Ssetsi was again recognized as the Catholicos of All Armenians, and the relations between Levon Metsagorts and Hovhannes Ssetsi became so warm that the latter was recognized by the Armenian King as one of the three guardians of King Levon's daughter, Zabel.

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 31-47.

Received: 25.07.2023
Revised: 12.09.2023
Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2023

Մի դրվագ Կիլիկիայի հայկական թագավորության և եկեղեցու հարաբերությունների պատմությունից (1198-1219 թվականներ)

Նելլի Ժամկոչյան
Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության և Հայ եկեղեցու պատմության ամբիոնի ավագ լաբորանտ և հայցորդ

Հիմնաբառեր՝ *Կիլիկիա, եկեղեցի, կաթողիկոս, թագավոր, կառավարում, հարաբերություններ, ժամանակաշրջան, հոգևորականություն, եպիսկոպոս, պատմություն, պատմիչ:*

Սույն հոդվածը նվիրված է Կիլիկիայի հայկական թագավորության սկզբնական շրջանում պետության և եկեղեցու հարաբերությունների պատմությանը: Միջնադարյան պատմիչների հաղորդած տեղեկությունների հիման վրա՝ ուսումնասիրության առարկա են դարձել նախնառաջ պետական կառավարման ոլորտներում Հայոց եկեղեցու և նրա ներկայացուցիչների դերակատարման և երևելի հոգևորականների գործունեության հարցերը, ապա որոշակիորեն անդրադարձ է կատարվել հայ-կաթոլիկ, հայ-ասորական և հայ-հունական եկեղեցաքաղաքական հարաբերություններին: Հոդվածի շրջանակներում ներկայացվել է նաև Լամբրոնի տիրակալի և Հայոց թագավորի հաշտեցման գործընթացը Հայոց կաթողիկոսի միջնորդությամբ: Հաշվի առնելով գիտական գրականության մեջ առկա տեսակետները՝ լուսաբանվել են 1203 թվականի Հայոց կաթողիկոսի ընտրության մանրամասները, ինչպես նաև նոր հայրապետ ընտրելու հարցում Կիլիկիայի թագավորական վերնախավի դերակատարումը, Սեբաստիայի Անանիա եպիսկոպոսի պառակտողական քայլերը: Հոդվածը երևան է հանել Լևոն Մեծագործի կողմից Հայ առաքելական եկեղեցուն հատկացրած տնտեսական օժանդակության որոշակի մանրամասներ, Լևոն Մեծագործի և Հայոց կաթողիկոս Հովհաննես Սսեցու հարաբերությունների սրման և նրանց բախման պատմությանը, որի արդյունքում՝ բավական ժամանակ լարվածություն ստեղծվեց պետության և եկեղեցու հարաբերություններում, ինչպես նաև նրանց հաշտեցմանը: Այսպես՝ Հովհաննես Սսեցին կրկին ճանաչվեց Ամենայն հայոց կաթողիկոս, և Լևոն Մեծագործի ու նրա հարաբերություններն այնքան ջերմացան, որ Հայոց արքայի կողմից վերջինս ճանաչվեց Լևոն թագավորի դստեր՝ Զաբելի երեք խնամակալներից մեկը:

Эпизод из истории армянского Киликийского царства и церковных отношений (1198-1219 гг.).

Нелли Жамкочян
Старший лаборант и соискатель кафедры Богословия и истории армянской церкви факультета Богословия Ереванского Государственного Университета

Ключевые слова: *Киликия, церковь, католикос, царь, администрация, отношения, период, духовенство, епископ, история, историк.*

Данная статья посвящена истории взаимоотношений государства и церкви в ранний период Армянского Киликийского царства. Опираясь на сведения средневековых историков, рассматриваются вопросы роли Армянской церкви и ее представителей в сферах государственного управления и деятельности священнослужителей, также армяно-католические, армяно-сирийские и армяно-греческие церковные отношения. В рамках статьи также был представлен процесс примирения между правителем Ламброна и армянским царем при посредничестве Католикоса Армении. Принимая во внимание точки зрения научной литературы, детали выборов Католикоса Армении в 1203 году, а также роль царской элиты Киликии в избрании нового архиерея, раскольнические шаги епископа Анании Севастийского. В статье раскрыты некоторые подробности экономической помощи, оказанной Левоном Мецагорцом (Великотвор) Армянской Апостольской церкви, история обострения отношений между Левоном Мецагорцом и Армянским католикосом Ованесом Ссетси, в результате чего на длительное время создалась напряженность в отношения между государством и церковью, а также их примирение. Таким образом, Ованес Ссеци был вновь признан Католикосом всех армян, а с Левоном Мецагорцом его отношения стали настолько теплыми, что он был признан царем одним из трех опекунов дочери принцессы Забел.

* * *

Մուտք։ Կիլիկիայի պետության և Եկեղեցու հարաբերությունների պատմության ուսումնասիրման մեջ կարևոր նշանակություն ունի 1198-1219 թթ. ժամանակաշրջանը, երբ նոր էր ստեղծվել Կիլիկիայի հայկական թագավորությունը։ Մինչև այժմ մասնագիտական գրականության մեջ բավարար կերպով ուսումնասիրված չեն նշյալ ժամանակաշրջանի պետության և եկեղեցու հարաբերությունների պատմության առանձին դրվագներ, և մի շարք հարցերի տրված չեն սպառիչ պատասխաններ։ Սույն ուսումնասիրությունը նվիրված է այդ տեղեկությունների ամբողջացմանը և նորովի լուսաբանմանը։

Հայոց եկեղեցին և պետությունը թագավորության հռչակումից հետո։ Կիլիկիայի հայկական թագավորության ստեղծումից հետո ակտիվորեն շարունակվում էր Հայոց պետության և Եկեղեցու համագործակցությունը։ Պապական կուրիայի հետաքրքրությունն էլ Հայոց եկեղեցու նկատմամբ ավելի է ուժեղանում Իննոկենտիոս Գ պապի իշխանության տարիներին (1198-1216) (Հայոց պատմություն, 2014, 351)։ Լևոն Մեծագործի թագավոր հռչակվելուց հետո արքան կաթողիկոսի հետ խորհրդակցելով շնորհակալական նամակ ուղարկեց Հռոմի Իննոկենտիոս Գ պապին (1198-1216)՝ Հայոց թագավորությունը ճանաչելու համար, որոնց լատինական թարգմանություններն են միայն պահպանվել։ Ինչպես հիշում ենք, հայոց արքան և հայ եկեղեցական ժողովը Լևոնի թագադրության դիմաց խոստացել էին դավանաբանական զիջումներ կատարել հռոմեական եկեղեցուն։ Նշված խնդրի վերաբերյալ մի տեսակետ է հայտնում Բրոկարդոսը, համաձայն որի, երբ հայերը հռոմեական եկեղեցուն միացան բանավոր ու գրավոր, խոստացան հավատի միություն, ու թեև հռոմեական եկեղեցու միջոցով ձեռք բերեցին թագավորության անուն և փառք՝ երես թեքեցին կաթոլիկներից՝ հետ խլելով այն հողերն ու վանքերը, որ տվել էին լատին հոգևորականությանը

(Brocarduc, 1907, 486-491): Դժվար է ամբողջությամբ համաձայնել Բրոկարդոսի տեսակետի հետ: Խնդիրն այն է, որ այո, իրոք հայերը խոստացած դավանաբանական զիջումները չկատարեցին, սակայն հողերի և վանքերի բռնագրավման փաստը շատ կասկածելի է, քանզի Կիլիկյան Հայաստանի պատմության գրեթե ողջ ընթացքում կաթոլիկները հայոց պետության տարբեր շրջաններում ունեցել են թե՛ մեծաքանակ հողեր, թե՛ եկեղեցիներ և թե՛ այլ հաստատություններ, որոնց մասին վկայում են միջնադարյան հայ և օտարազգի մի շարք պատմիչներ: Մասնավորապես նրանք մեծ քանակի հարստություններ են ունեցել հատկապես հայկական թագավորության ծովափնյա շրջաններում:

Հետազոտվող թեմայի շուրջ իր տեսակետն է հայտնում նաև ֆրանսիացի հայտնի հայագետ Ռընե Գրուսեն: Ըստ նրա հաղորդած տեղեկությունների՝ Կիլիկիայի հայ հոգևորականությունը և իշխող հարստությունը ոչ մի պահ չկամեցան ուրանալ իրենց դավանանքը և ընդունել երկու բնությունները (Grousset, 1949, 394): Եվ ընդհանրապես Կիլիկյան Հայաստանում Լևոն Մեծագործի օրոք կաթոլիկության տարածումը հայ ժողովրդի մեջ հայտարարություններից և աննշան փոփոխություններից այն կողմ չանցավ և չէր էլ կարող անցնել: Դրան է վկայում նաև Գ. Հակոբյանը, համաձայն որի՝ թագադրության ժամանակ Լևոնն իրեն հայտարարեց արևմտյան Եվրոպայի ավատառու և ընդունեց գերմանական կայսեր վեհապետությունը, թեև մի երկու տարի հետո՝ համոզվելով, որ նման կախյալ վիճակը ձեռնտու չէ Կիլիկիայի համար, որոշեց վարել ինքնուրույն, անկախ քաղաքականություն «Թագաւոր շնորհիւն Աստուծոյ» սկզբունքով (Հակոբյան, 1971, 29):

Փաստորեն՝ հեղինակի խոսքերից կարելի է եզրակացնել, որ Կիլիկիայի թագավորության հռչակումից հետո Հայոց եկեղեցին և պետական կառավարման համակարգը հաջողությամբ համագործակցել են միմյանց հետ և թույլ չեն տվել, որ կաթոլիկների ազդեցությունը ուժեղանա երկրի ներսում:

Հոգևորականների մասնակցությունը երկրի կառավարմանը: Ինչպես արդեն նշել ենք, թագավորության հռչակումից հետո Լևոն Մեծագործը Կիլիկիայի հոգևորականությանը մասնակից է դարձնում երկրի կառավարմանը, հսկայական արտոնություններ է տալիս արքունիքում և այլ բնագավառներում: Թագավորության սկզբնական շրջանում հայ հոգևորականներից ամենաազդեցիկը, ով լուրջ դերակատարում ուներ պետական-քաղաքական կառավարման համակարգում արքեպիսկոպոս Ներսես Լամբրոնացին էր, ով դարձել էր նաև արքայի խորհրդականը (Հակոբյան, 1971, 29), և վերջինիս վստահվում էր ոչ միայն հոգևոր ոլորտի, այլև քաղաքական բնույթի բազմաթիվ հարցերի ղեկավարումը: Բացի Ներսես Լամբրոնացուց, երկրի կառավարմանը իրենց մասնակցությունն են ցուցաբերել մի շարք այլ հոգևորականներ ևս: Նշենք նաև, որ Կիլիկյան Հայաստանի դատական համակարգի երկրորդ ատյանի ղեկավարումը՝ Սսի արքեպիսկոպոսական ատյանը, որը մեծ ազդեցություն ուներ, նույնպես թողնվում է հոգևոր դասի կառավարմանը: Այլ խոսքով՝ հոգևորականությունը մասնակցություն ուներ նաև երկրի արդարադատությանը: Նշենք նաև, որ հիշյալ դատարանի միաժամանակ բարձրագույն թագավորական դատարանն էր քաղաքացիական գործերով, առաջին ատյանի դատարանն էր օտարերկրացիների և հայերի միջև ծագող խոշոր քաղաքացիական վեճերով, ինչպես նաև

դատարանը՝ օտարերկրացիների կողմից կատարված քրեական հանցանքների գործերով: Այստեղ քննվում էին բնակչության կենցաղին վերաբերող գործեր, հոգևորականության ժառանգականության, հոգևոր ֆեոդալների օգտին գանձվող տասանորդի և այլ հարկերը մուծելու կարգը խախտելու գործեր: Հավելենք նաև, որ հոգևորականների իրավասության տակ էին շարունակում մնալ նաև թեմերում գործող եպիսկոպոսի դատարանը, ինչպես նաև վանքերում գոյություն ունեցող վանահայրերի դատարանները: Ժամանակակից հետազոտողներից Ս. Բոռնազյանը կարծիք է հայտնում, որ ժամանակի ընթացքում Սսի արքեպիսկոպոսական ատյանի մասնաճյուղեր հաստատվեցին նաև քաղաքներում, որտեղ քննվում էին բնակիչների՝ հատկապես առևտրականների միջև ծագած վեճերը և քրեական հանցագործությունները (Բոռնազյան, 1973, 126-128): Վերջապես հոգևոր հիերարխիայի բարձր աստիճանում կանգնած հայրապետը կամ կաթողիկոսը ուներ բավականին մեծ լիազորություն, ընդ որում՝ նա գլխավորում էր հանցագործ թագավորին դատող գերագույն ատյանի նիստերը Բոռնազյան, 1973, 126-128):

Կիլիկիայի հայկական թագավորության հիմնադրումից կարճ ժամանակ անց հայ հոգևորականությանը հանձնվեց կառավարման համակարգի մի կարևոր օղակ ևս: Դա ջանցլերի (կանցլեր) բարձր պաշտոնն էր, որը ղեկավարում էր Կիլիկյան Հայաստանի արտաքին գործերի գերատեսչությունը: Այն հիմնականում տրվում էր առավել գրագետ և բանիմաց հոգևորականներից մեկին, ով պարտադիր պետք է իմանար օտար լեզուներ (Սուքիասյան, 1978, 177):

Ինչպես նկատում ենք, Լևոն Մեծագործը Կիլիկիայի հոգևորականությանն է հանձնում երկրի չափազանց կարևոր նշանակություն ունեցող կառավարման մի օղակ ևս:

Հայտնի է, որ թագավորության հռչակումից հետո էլ Քրիստոնյա Արևմուտքը և հատկապես Հռոմի պապական աթոռը փորձում էր ուժեղացնել կաթոլիկության ազդեցությունը երկրում: Դրան նպաստում էին որոշ գործոններ՝

Կաթոլիկները որոշակի ազդեցություն ունեին Կիլիկյան Հայաստանում և հատկապես ծովափնյա շրջաններում:

Հայոց տիրակալների կանայք հիմնականում ընտրվում էին խաչակրաց երկրներից, և այդ տեսակետից՝ բացառություն չէր նաև Լևոն Մեծագործը:

Դեռևս 1197-1198 թթ. հայոց արքան Հռոմի պապական աթոռի ներկայացուցիչներին խոստացել էր արքա հռչակվելուց հետո դավանաբանական զիջումներ իրականացնել, բայց իրականում դրանք չիրականացվեցին:

Հայտնի է, որ Անտիոքում կաթոլիկները հիմնադրել էին իրենց պատրիարքությունը, որից հետո փորձեցին իրենց իշխանությանը ենթարկեցնել Հայ առաքելական եկեղեցուն, ինչը բնականաբար չափազանց վտանգավոր իրավիճակ էր ստեղծում: Մյուս կողմից էլ նմանատիպ քաղաքականությունն առաջ է բերում դժգոհություն թե՛ Հռոմկլայի կաթողիկոսարանի և թե՛ Կիլիկիայի ղեկավար շրջանակներում, և շատ բնական է, որ իր վճռորոշ խոսքը պետք է ասեր Հայոց արքան և հայոց պետության ղեկավարությունը: Շուտով Լևոն Մեծագործի միջամտության արդյունքում այս վտանգավոր գործընթացը կասեցվեց: Դեռ ավելին՝ Լևոն Մեծագործը դիմեց Հռոմի պապին՝ պահանջելով, որպեսզի Անտիոքի լատին պատրիարքը չմիջամտի Հայոց եկեղեցու ներքին գործերին: Լևոն Մեծագործի միջամտությունը վերը նշյալ խնդրին խոսում է նրա մասին, որ թագավորության հռչակումից առաջ վերջինիս կողմից խոստացած դավանաբանական զիջումները չէին իրականացվելու:

Իսկ ինչպիսի մոտեցում պետք է ցուցաբերեր Հռոմի պապ Ինոկենտիոս Գ-ն: Հստակ կարող ենք արձանագրել, որ թեև պապական աթոռի ղեկավարը շատ կցանկանար Կիլիկիային ենթարկեցնելու և կաթոլիկությունը տարածելու, սակայն պապը լավ գիտակցում էր, որ այդ քաղաքականությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ երկկողմ հարաբերություններում, ինչը որևէ կերպ չէր մտնում նրանց ծրագրերի մեջ, քանի որ Քրիստոնյա Արևմուտքը ապագայում ծրագրավորում էր նոր խաչակրաց արշավանքներ կազմակերպել դեպի Արևելք, և նրանում մեծ տեղ էր տրվում Կիլիկիայի հայկական թագավորությանը՝ որպես ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող քրիստոնյա երկրի: Եվ հավանաբար հենց դա է պատճառը, որ շուտով Հռոմի պապը 1202 թվականի հունիսին մի հրաման արձակեց և արգելեց լատին պատրիարքին խառնվելու Հայ եկեղեցու ներքին գործերին (Կղեմես Գալանոս, 1690, 364, Ալիշան, 1885, 943):

Խոսելով Կիլիկիայի պետության և Եկեղեցու համագործակցության մասին, պետք է նշել, որ Հայոց եկեղեցու ղեկավարությունը ժամանակ առ ժամանակ կարևոր դեր էր խաղում միմյանց դեմ մարտնչող իշխանների, ինչպես նաև իշխանների և արքայի միջև հակամարտությունը կարգավորելու հարցում:

Եկեղեցու համագործակցությունը հյուսիսարևելյան Հայաստանի վարդապետերի և Լամբրոնի Հեթումյանների հետ: Հայտնի փաստ է, որ Լևոնը կարևոր դեր էր հատկացնում նաև հյուսիարևելյան Հայաստանի հոգևորականների հետ համագործակցությանը և հավանաբար դա էր պատճառը, որ նա շուտով աշխատանքից ազատում է Կիլիկյան Հայաստանի հայտնի հոգևորական Ներսես Լամբրոնացուն: Իսկ պատճառը, համաձայն Գ. Հակոբյանի, Սանահնի և Հաղպատի մի քանի վանականների բողոքագրերն էին, որ ընդառաջեց հայոց արքան և արքունիքից հեռացրեց այդ ճանաչված հոգևորականին, ինչն էլ ծանր նստեց վերջինիս վրա և հավանաբար դարձավ նրա վաղաժամ մահվան պատճառ (Հակոբյան, 64): Շարունակելով իր խոսքը՝ հետազոտողը նաև ավելացնում է, որ Լամբրոնացին առանց կաթողիկոսի և արքունիքի համաձայնության հետևյալ քայլն էր կատարել. այսպես հայ եկեղեցական կանոնների համաձայն՝ այրիներին և ամուսնալույծներին չէր թույլատրվում երրորդ անգամ ամուսնանալ, իսկ Լամբրոնացին՝ որպես Տարսոնի թեմի առաջնորդ, տվեց երրորդ անգամ ամուսնության կարելիության հրաման, ինչն էլ իր դեմ հանեց հյուսիսարևելյան Հայաստանի հոգևորականներին (Հակոբյան, 1971, 64): Այն, որ նշյալ տարիներին Լամբրոնացին Կիլիկիայում մեծ հեղինակություն ուներ և մի շարք հարցեր ինքնուրույն էր իրականացնում, փաստ է, սակայն հայոց արքան հավանաբար իր խորհրդականին ազատեց նրա համար, որպեսզի չկտրի կապը բուն Հայաստանի հետ, քանզի Լևոնի մտքում կային միավորման հեռանկարներ, և այդ գործում անշուշտ իրենց խոսքը պետք է ասեին նաև բուն Հայաստանի հոգևորականները:

Հայտնի է նաև, որ Կիլիկյան Հայաստանում Լամբրոնի Հեթումյանները դեռևս վաղ ժամանակներից ընդդիմադիր էին Ռուբինյաններին, ինչն ազդում էր հայոց արքայի հեղինակության վրա: Քանի դեռ կենդանի էր Ներսես Լամբրոնացին, ով Հեթում իշխանի եղբայրն էր, Լևոնը որևէ քայլ չձեռնարկեց, որ չնեղացնի իր խորհրդականին, բայց երբ Լամբրոնացին մահացավ, Լևոնը կարողացավ ծուղակը գցել Լամբրոնի բերդի տիրոջը՝ Հեթում իշխանին, և առանց կռվի գրավել այդ անառիկ ամրոցը (Հովհաննիսյան, 2014, 229-236): Միգուցե Հեթում

իշխանը երկար մնար ձերբակալված, եթե գործին չխառնվեր հայոց կաթողիկոսը, որի միջնորդությամբ էլ Լևոնն ազատ արձակեց Հեթումին, բայց չտվեց Լամբրոնը, այլ շնորհեց Դրազարկի վանքը: Ինչպես վկայում է ժամանակակից հետազոտողներից Վ. Վարդանյանը, դա կատարվեց Գրիգոր Ապիրատի նախաձեռնությամբ, քանի որ Հեթում իշխանը հանդիսանում էր կաթողիկոսի քրոջ որդին (Սմբատ Սպարապետ, 1956, 210, նաև Վարդանյան, 2008, 175): Դեռ ավելին, բացի ազատ արձակելը, Հեթումին շնորհվեց նաև եկեղեցական աստիճան: Այս դեպքից հետո, շնորհիվ եկեղեցու ղեկավարի միջամտության, Լևոն Մեծագործը և Հեթումը դարձան մտերիմներ և համագործակցեցին միմյանց հետ պետական քաղաքական կառավարման ասպարեզում: Եվ ընդհանրապես կաթողիկոսի միջնորդությամբ Լամբրոնի տիրոջ հնազանդեցումը էականորեն նպաստեց երկրի զարգացմանը և Լևոն Մեծագործի հեղինակության բարձրացմանը: Բնականաբար, Լևոն Մեծագործն էլ գնահատում էր Գրիգոր Ապիրատի պետականամետ գործունեությունը:

Ինչպես նկատում ենք, 13-րդ դարի սկզբներին Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանը և Կիլիկիայի հայկական թագավորությունը հանդես եկան որպես մեկ միասնական բռունցք, ինչը շատ կարևոր նշանակություն ունեցող երևույթ էր: Հետաքրքիր է, որ 13-րդ դարի սկզբներից սկսած՝ հայոց արքան ուժեղացնում է համագործակցությունը Հայոց եկեղեցու հետ, շինարարական աշխատանքներ է կազմակերպում Կիլիկիայի տարբեր շրջաններում՝ կառուցելով վանքեր, եկեղեցիներ, և տնտեսական աջակցություն է ցույց տալիս նրանց: Այդ մասին է վկայում միջնադարյան պատնիչներից Միքայել Ասորին, ով վկայում է, որ Լևոնը եկեղեցական հայրերին և որոշ հոգևորականների ապահովում էր գյուղերով, ագարակներով և կալվածքներով (Միքայել Ասորի, 1870, 504): Եկեղեցիների ու վանքերի օգտին Լևոն Մեծագործի նվիրատվությունների մասին խոսում են նաև պատմիչներ Սմբատ Սպարապետը (Սմբատ Սպարապետ, 208), Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը (Սամվել Անեցի, 1893, 144, 152), Վահրամ Ռաբունին (Վահրամ Ռաբունի, 1859, 1-55) և շատ ուրիշներ: Հայտնի է նաև, որ թագավորության հռչակումից հետո Լևոն Մեծագործը մայրաքաղաք Սսում կառուցեց Ս. Էջմիածին կաթողիկեն, Ս. Մարինե և Ս. Աստվածածին եկեղեցիները, գործընթաց, որ շարունակվեց նաև նրա հաջորդների օրոք: Բացի այդ, Լևոնը թագավորության ստեղծման հենց սկզբնական շրջանից Կիլիկիայում գործող վանքերին կից ստեղծում է դպրատներ և վարժարաններ: Այդ մասին միջնադարյան պատմիչներից խոսում է Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը. «Սիրէր զեկեղեցիսն Աստուծոյ և զվանորայս՝ և զեկեղեցականս, մանաւանդ զվարդապետս որ և տուն կարգեաց վարդապետեաց…» (Սամվել Անեցի, 152): Պատմիչ Միքայել Ասորին էլ ավելացնում է, որ հայոց արքան. բացի հողային նվիրատվություններից, նաև ռոճիկ էր տալիս շատ Կիլիկիայի հոգևորականների. «այր բարի և ազատամիտ և արիական և հեզ և մեծահաւատ, որ և բազմացոյց զարդիւնս աստուածապաշտութեան, ելից վանօրայիւք և անապատաւորօք զաշխարս իւր և շինուածօք եկեղեցեաց...» (Միքայել Ասորի, 504):

Ս. Բոռնազյանը կարծում է, որ արքան այնպիսի վիճակ էր ստեղծել, որի հետևանքով տարբեր հոգևորականներ տիրում էին Կիլիկյան Հայաստանում բազմաթիվ գյուղերի և ագարակների (Բոռնազյան, 85-95): Հետաքրքիր է նաև Վ. Վարդանյանի կարծիքը, համաձայն որի՝ Գրիգոր Ապիրատը իր կյանքի վերջին տարիներին փորձել է Ամենայն հայոց կաթողիկոսարանը տեղափոխել մայրաքաղաք Սիս (Վարդանյան, 176), սակայն չի ստացվել: Շատ հավանական է, որ

նրան այդ քայլին դրդել է հենց հայոց արքան, որպեսզի այդ կարևոր քաղաքական ինստիտուտը ամբողջովին գտնվեր իր վերահսկողության տակ: Ըստ Ա. Բոզոյանի՝ Կիլիկիայի հայկական պետության հեռավոր սահմանագլխում էր գտնվում հայոց կաթողիկոսների նստավայր Հռոմկլան, որը փորձում էր դուրս լինել Կիլիկիայի հայկական պետության ենթակայության սահմաններից՝ նախընտրելով լինել տարածաշրջանի հզոր պետությունների ստորական (Բոզոյան, 1988, 219-220):

Ամեն դեպքում կաթողիկոսարանի տեղափոխման հարցը հետաձգվեց մինչև 13-րդ դարի 90-ական թվականներ, քանզի հոգևորականությունը Հռոմկլայում ավելի անկախ էր:

Հռոմկլայի կաթողիկոսարանը և տարածաշրջանի մյուս քրիստոնեական եկեղեցիները: Հայտնի է, որ դեռևս Կիլիկիայի իշխանապետության ժամանակաշրջանից բավական սերտ հարաբերություններ էին հաստատվել քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ: Մասնավորապես կարևոր էին հայ և ասորի եկեղեցիների հարաբերությունները: Այդ համագործակցությունը, որ սկսվել էր վաղ ժամանակներից, շարունակվեց նաև Լևոն Մեծագործի թագավորության ժամանակաշրջանում: Մասնավորապես հայկական թագավորության հռչակումից հետո հակոբիկ ասորական եկեղեցու պատրիարքները սկսեցին սերտորեն համագործակցել Ռուբինյան թագավորական ընտանիքի հետ: Թեպետ պատրիարքների նստավայրը գտնվում էր Բար Սաումայի վանքում՝ Իկոնիայի սուլթանության տարածքների մեջ, Լևոն Մեծագործը միջնորդում է Իկոնիայի Քեյ Խոսրով սուլթանին՝ հակոբիկ ասորիների պատրիարք ճանաչել Հովհաննես XIV-ին (1208-1220): Այս շրջանից ի վեր հակոբիկ ասորի եկեղեցու պատրիարքների նստավայրներից մեկն էլ դառնում է Սսի մայրաքաղաքը: Գերմանացի ճանապարհորդ Վիլբրանդ Օլդենբուրգցին 1212 թ. հունվարի 6-ին հիշատակում է հակոբիկ եկեղեցու ներկայացուցչին Սսում՝ Ս. Ծննդյան և Հայտնության տոնի թափորի մեջ, Ամենայն հայոց կաթողիկոսի և Անտիոքի հունադավան պատրիարքի հետ (Ալիշան, 476): Այս համագործակցությունը հետագայում էլ շարունակվեց և մասնավորապես Հեթում Ա-ի օրոք հակոբիկների Իգնատիոս Բ պատրիարքը (1222-1252) եկեղեցիներ է կառուցում Սսում, Հռոմկլայում և Մամեստիայում (Հայ ժողովրդի պատմություն, 404):

Հետաքրքիր է նաև նշել, որ պատմական այս նույն ժամանակաշրջանում Կիլիկիայի պետությունը և Հայոց եկեղեցին որոշակի կապեր են հաստատել նաև հունական եկեղեցու հետ: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ 1213 թվականի մարտին Իննոկենտիոս Գ-ն հայոց թագավորի գրված ուղերձում դժգոհություն էր հայտնում Տարսոնի լատին եկեղեցու հողերը հույներին հանձնելու կապակցությամբ (Ավետիսյան, 2022, 368): Կարելի է համաձայնել Ավետիսյանի կարծիքին, քանզի մի կողմից հայոց արքան չի ցանկացել ամբողջովին կտրել կապը հույն եկեղեցու և Բյուզանդական կայսրության հետ, իսկ մյուս կողմից էլ փորձել է կանխել Կիլիկիայում օրեցօր հզորացող կաթոլիկ եկեղեցու դիրքերը:

Փաստորեն՝ կարելի է արձանագրել, որ բացի Հայ առաքելական եկեղեցու հետ համագործակցությունից, Կիլիկիայի հայկական պետությունը ակտիվորեն համագործակցել է նաև տարածաշրջանի մյուս քրիստոնեական եկեղեցիների և մասնավորապես ասորական եկեղեցու հետ, ինչը, կարծում ենք, շատ ճշգրիտ և հեռանկարային քայլ էր:

Կաթողիկոսական ընտրությունը։ 1203 թ. մահացավ կաթողիկոս Գրիգոր Ապիրատը, որով էլ ավարտվեց Պահլավունիների ժառանգական դինաստիան։ Այս առնչությամբ հետաքրքիր տեսակետ է արտահայտում հետազոտողներից Վ. Վարդանյանը։ Վերջինս տեղեկացնում է, որ նրանց գահակալած 138 տարիները դրամատիկ իրադարձություններով լի ժամանակաշրջան էին Կիլիկիայի պետության համար (Ավետիսյան, 177)[1]։ Պահլավունիները դիմակայեցին քաղաքական բռնաշունչ հողմերին և պահապան կանգնեցին հայրենավանդ հոգևոր արժեքներին և Պահլավունի տոհմից սերած հայրապետներն իրենց խորախորհուրդ պատգամներով և հայրենանվեր գործունեությամբ պաշտպանեցին Հայոց հավատքը, էականորեն նպաստեցին երկրի հոգևոր և քաղաքական ինքնության պահպանմանը (Ավետիսյան, 177)։ Բնականաբար, կարելի է համաձայնել հետազոտողի նշյալ տեսակետի հետ։ Թեմայի առնչությամբ իր տեսակետն է հայտնում նաև Կ. Մաթևոսյանը, համաձայն որի՝ հայոց կաթողիկոսական գահին Պահլավունիների այս ժառանգականության շքերթը (որը քննադատվում էր ինչպես երկրի ներսում, այնպես էլ այլ եկեղեցիների կողմից), վերջ գտավ միայն Կիլիկիայի հայոց առաջին թագավոր Լևոն Մեծագործի միջամտությամբ (Մաթևոսյան, 2015, 82)։ Եվ վերջապես՝ Գրիգոր Ապիրատը այն կաթողիկոսն էր, ում աթոռակալման ժամանակաշրջանում իրականացավ հայ ժողովրդի դարավոր երազանքը, ստեղծվեց Կիլիկիայի հայկական թագավորությունը։

Առաջ եկավ նոր կաթողիկոսի ընտրության խնդիրը, և եթե վստահենք պատմիչների տեղեկություններին, ապա կար երկու հիմնական թեկնածու։ Առաջինը Հովհաննես Սսեցին էր, ով Լևոն Մեծագործի մտերիմն էր և Կիլիկիայի իշխանների համար նախընտրելի թեկնածուն, իսկ երկրորդը Սեբաստիայի եպիսկոպոս Անանիան, որին, ամենայն հավանականությամբ, հովանավորում էր Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը։ Այժմ տեսնենք, թե ինչ տեղեկություններ են առկա միջնադարյան պատմիչների երկերում։

Այսպես՝ Սմբատը շատ հակիրճ տեղեկություններ է տալիս և միայն արձանագրում է, որ հայոց կաթողիկոս դարձավ Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսը. «Եւ ի սոյն ամի ժողով արար եպիսկոպոսաց թագաւորն Լեւոն, և եդին զտէր Յոհաննէս զարքեպիսկոպոսն Սսոյ կաթողիկոս հայոց, որ էր այր խորագէտ և իմաստուն» (Սմբատ Սպարապետ, 213)։ Ինչպես նկատում ենք, հայոց սպարապետը միայն արձանագրում է Հովհաննես Սսեցու՝ կաթողիկոս հռչակվելու փաստը և այլ մանրամասներ չի հայտնում։

Մյուս հեղինակը, որ խոսում է այս մասին, Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկն է, ով նշում է, որ Հովհաննես Սսեցին կաթողիկոսական աթոռին է բազմել Լևոն Մեծագործի շնորհիվ և գովեստի խոսքեր է ուղղում նրա մասին. «ՌՄԶ (ՈԾԳ) թագաւորն Լևոն ժողովեալ բազում եպիսկոպոսունս՝ և եդին զտէր Յոհաննէս խաչկտոր կաթողիկոս զարքեպիսկոպոսն Սսոյ՝ որ էր այր արքայակերպ՝ առատասիրտ և ողորմած հեզ և խոնարհ բարուք կացեալ ամս…» (Սամվել Անեցի, 145), իսկ ահա Հովհաննես Սեբաստացին, ով նույնպես անդրադարձել է նշյալ խնդրին, ավելի մանրամասներ է հաղորդում, համաձայն որի՝ կաթողիկոսական ընտրությունը ընթացել է հավասար պայմաններում, և միայն Լևոն Մեծագործի միջամտության արդյունքում կաթողիկոս է ընտրվել Հովհաննես արքեպիսկոպոսը. «Յայնժամ ժողովեալ Լևոնի զեպիսկոպոսունս ազգիս

[1] Հետաքրքիր է նաև Հովհաննես Սեբաստացու վկայությունն առ այն, որ Գրիգոր Ապիրատը մահացել է 1202 թվականին. «Եւ յետ ամաց իբրև չորից (ՈԾԱ-1202) հիւանդացեալ Գրիգոր կաթողիկոսի՝ վախճանեցաւ ի Սիս քաղաքի» (Յովհաննէս Սեբաստացի, 1974, 48)։

մերոյ՝ խորհուրդ արար վասն ընտրութեան նոր կաթողիկոսի. կէսք ասէին ընտրել զԱնանիա եպիսկոպոս Սեբաստիոյ, որ համարիւր լինել յազգականութենէ Պետրոսի Գետադարձին և էր հաճոյ յաչս բազմաց. և կէսք՝ զՅոհաննէս արքեպիսկոպոս Սսոյ: Եւ ի ծագել մեծի տարաձայնութեան հրաման ետ Լևոն արքայ ձեռնադրել զՅոհաննէս, որ էր ընտանի թագաւորին և սիրելի պալատականացն, այր արքայակերպ և փառացի անձամբ, և հաւանեալ այնմ ժողովելոցն՝ կատարեցին ըստ բան արքային: Եւ գնացեալ նստաւ Հոհաննէս յաթոռ կաթողիկոսութեան ի Հռոմկլայ, որ ի մականուամբ Մեծաբարոյ կոչեցաւ» (Հովհաննես Սեբաստացի, 48-49):

Ինչպես նկատում ենք, ի տարբերություն Սմբատ Սպարապետի և Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկի հաղորդումների, Հովհաննես Սեբաստացին ավելի շատ և արժանահավատ տեղեկություններ է հաղորդում կաթողիկոսության ընտրության մասին: Եվ վերջապես նշյալ խնդրի մասին խոսում է նաև Անանուն Եդեսացին, ով վկայում է, որ գահին տիրեց Հովհաննես անունով մեկը, ով Կիլիկիայի իշխանների ցեղից էր, որոնք այժմ էլ կանգնած են իշխանության գլուխ (Անանուն Եդեսացի, 1982, 193): Այլ խոսքով՝ Անանուն Եդեսացին հաստատում է Հովհաննես Սեբաստացու վկայությունը:

Ժամանակակից հեղինակներից էլ նշված խնդրին անդրադարձել է Հ. Պերպերյանը, ով հիմնվելով պատմիչների տեղեկությունների վրա, կարծիք է հայտնում, որ Անանիայի կուսակիցները դժգոհ մնացին կաթողիկոսական ընտրության արդյունքներից և եկան եզրակացության, որ նոր կաթողիկոսը ոչ թե ընտրվել է եպիսկոպոսների կողմից, այլ թագավորի պարտադրմամբ (Պերպերյան, 1964, հոկտեմբեր, 286-289): Ապա Անանիան համաձայնության գալով Փոքր Հայքի եպիսկոպոսների և վանականների, մանավանդ Սեբաստիայի և Կեսարիայի բնակիչների հետ՝ դիմեց Իկոնիայի սուլթանին և «կաշառքով» կամ թանկագին նվերներ մատուցելով հաջողեցրեց իրեն կաթողիկոս ընտրել, իսկ Լևոնը ոչինչ չկարողացավ անել (Պերպերյան, հոկտեմբեր, 286-288):

Այսպիսով՝ Անանիա եպիսկոպոսը, ով հույսեր էր կապում կաթողիկոս ընտրվելու համար, խիստ դժգոհ մնալով կաթողիկոսական ընտրությունից՝ նույն թվականին վերջինս, ստանալով Իկոնիայի սելջուկ սուլթան Ռուքն ադ-Դինի հովանավորությունը, Սեբաստիայում օծվեց որպես հակաթոռ կաթողիկոս (Պերպերյան, հոկտեմբեր, 286-289, Պերպերյան, նոյեմբեր-դեկտեմբեր, 360-363), ինչը բնականաբար շատ բացասական կարող էր ազդել եկեղեցական կյանքի վրա: Ըստ Հովհաննես Սեբաստացու՝ Անանիայի հոգևոր իշխանությունը տարածվում էր Փոքր Հայքի և հատկապես Սեբաստիայի և Կեսարիայի վրա (Հովհաննես Սեբաստացի, 48-49):

Մ. Օրմանյանը, ով բավականին խորությամբ ուսումնասիրել է Հայ եկեղեցու պատմությունը, քննության առարկա հարցի առնչությամբ նշում է, որ քանի որ չկար հարմար թեկնածու Պահլավունիների տոհմից, հայրապետական աթոռին բազմում է հայոց արքայի թեկնածուն՝ Հովհաննես Սսեցին (1203-1221) (Օրմանյան, սյուն 1823-1824): Հիշյալ հետազոտողի հետ համակարծիք է նաև Ե. Պետրոսյանը (Պետրոսյան, 1990, 137): Բացի այդ, Օրմանյանը նաև ավելացնում է, որ Հովհաննեսը կարողացել էր մտերմանալ Լևոն արքայի հետ, ինչն էլ բնականաբար ունեցել էր կարևոր նշանակություն (Օրմանյան, սյուն 1823-1824): Նրա տեսակետը պաշտպանում է նաև Բակուրանը (Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, 1959,

83)։ Վերջապես այս մասին իր տեսակետն է հայտնում նաև ժամանակակից հետազոտողներից Կ. Մութաֆյանը, համաձայն որի՝ Լևոնը կաթողիկոսական գահը պարտադրում է իր մտերիմներից մեկին՝ Սսի արքեպիսկոպոս Հովհաննեսին (Մութաֆյան, 2001, 405)։ Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանզի հայոց արքան, գտնվելով փառքի գագաթնակետին, չէր կարող թույլ տալ, որ այդ կարևոր ինստիտուտի գլուխ բազմեր մի այնպիսի անձնավորություն, ում համակրանքը նա չվայելեր։

Ինչպես նկատում ենք, միջնադարյան պատմիչների տեղեկությունները, ինչպես նաև գիտական գրականության մեջ առկա տեսակետները բերում են մեզ այն համոզման, որ Կիլիկիայի թագավորական վերնախավը անմիջական մասնակցություն է ցուցաբերել հայոց կաթողիկոսության համար մղվող պայքարին և այդ պատասխանատու պաշտոնին բազմեցրել է իրենց համար ցանկալի թեկնածուին։

Հովհաննես Սսեցու գործունեությունը։ Հովհաննես Սսեցին սերում էր Հեթումյանների ընտանիքից, նախապես եղել էր Արքակաղնի և Դրազարկի վանքերի վանահայրը, ապա ընտրվել մայրաքաղաք Սսի արքեպիսկոպոս։ Ըստ Սմբատ Սպարապետի՝ Հովհաննեսը կաթողիկոս ընտրվելով գումարներ է հատկացրել Հռոմկլայի բերդի ամրացման համար, եղել է հայկական եկեղեցու հնավանդ սովորույթների պահպանության ջատագովը, ձուլել է տվել ոսկե և արծաթե եկեղեցական զարդերը, վերացրել է թանկարժեք սպասքերը, ինչը հայերը Պահլավունիների կաթողիկոսության շրջանում սկսել են օգտագործել կաթոլիկների նմանությամբ (Սմբատ Սպարապետ, 213)։ Սամվել Անեցին անդրադառնալով Հովհաննես եպիսկոպոսին՝ հետևյալն է նշում. «այր արքայակերպ, առատասիրտ եւ ողորմած, հեզ եւ խոնարհ բարուք կացեալ ամս…» (Սամվել Անեցի, 146)։ Իսկ ահա Սմբատ Սպարապետը ավելացնում է, որ Հովհաննես կաթողիկոսը շատ համեստ անձնավորություն էր, խելացի, հագնվում էր շատ համեստ, մեծահոգի էր։ Նա հարգում էր առաքինի մարդկանց և թաքցնում էր հոգևորականության թերությունները, սիրում էր կառուցել (Սմբատ Սպարապետ, 213)։ Բացի այդ, նույն պատմիչի վկայմամբ նա բավարարում էր բոլոր այն մարդկանց, ովքեր իրեն դիմում էին ինչ ինչ հարցերով (Սմբատ Սպարապետ, 213)։ Թեև միջնադարյան պատմիչների վկայմամբ հստակ երևում է, որ Հովհաննես Սսեցին կաթողիկոս է ընտրվել թագավորական իշխանության միջամտության արդյունքում, սակայն նկատելի է պատմիչների դրական վերաբերմունքը դեպի նորընծա հայրապետը։ Եվ ընդհանրապես Հովհաննես Սսեցին կաթողիկոսության տարիներին էլ իրեն դրսևորեց դրական կողմերով և ամուր պահեց Հայ առաքելական եկեղեցու դավանանքը։

Հայտնի է նաև, որ Հովհաննես Սսեցին կաթողիկոս ընտրվելուց հետո համագործակցում էր արքայի հետ։ Այսպես՝ հայոց արքան և Հովհաննես Սսեցին ակտիվ բանակցություններ են վարել Հռոմի պապական աթոռի ներկայացուցիչների և մասնավորապես Իննոկենտիոս Գ-ի հետ՝ հարցերը կարգավորելու համար։ Հովհաննես կաթողիկոսը պատրաստ էր ազգի պատիվը բարձր պահել։ Հայտնի է նաև, որ հայրապետը նամակ է գրել Հռոմի պապին՝ խնդրելով, որպեսզի վերջինս Անտիոքի խնդիրը լուծի հօգուտ Ռուբեն Ռայմոնդի (Օրմանյան, սյուն 1830), մի նպատակ, որին շատ էր ձգտում հայոց արքան։

Թեև հայոց արքան մեծ ջանքեր գործադրեց, որ կաթողիկոսական աթոռին բազմի իրեն համար նախընտրած և մտերիմ Հովհաննես Սսեցին, սակայն կարճ ժամանակ անց նրանց հարաբերությունները խիստ սրվում են և վերածվում թշնամականի։ Իսկ ի՞նչն էր հայոց արքայի և Հովհաննես կաթողիկոսի բախման պատճառը։

Այսպես՝ մոտավորապես 1204/1205 թթ. Լևոն Մեծագործը բախվում է իր երբեմնի մտերիմ Հովհաննես Սսեցու հետ և փորձում ազատվել նրանից: Այդ մասին միջնադարյան պատմիչների երկերում բավական տեղեկություններ են պահպանվել: Մասնավորապես նշյալ խնդրի մասին խոսում են Կիրակոս Գանձակեցին (Կիրակոս Գանձակեցի, 1961, 157-158), Վարդան Արևելցին (Վարդան Արևելցի, էջ 187) և շատ ուրիշներ:

Պատմիչ Կիրակոս Գանձակեցին շատ հպանցիկ անցնում է և նշում, որ հայոց կաթողիկոսը ապստամբել էր Լևոն արքայի դեմ (Կիրակոս Գանձակեցի, 187), սակայն որևէ այլ մանրամասներ չի նշում: Բնականաբար նման տեղեկությունը շատ քիչ է հասկանալու համար խնդիրը: Հովհաննես Սսեցու և հայոց արքայի բախմանն անդրադարձել է նաև Հովհաննես Սեբաստացին և շատ հակիրճ. «Եւ եղև զի ծագեցաւ գժտութիւն ինչ ի մէջ Լևոն արքայի և Յոհաննու կաթողիկոսի՝ յետ կալոյ յաթոռ հայրապետութեան ժամանակս …» (Հովհաննես Սեբաստացի, էջ 48): Մյուս հեղինակը, որ անդրադարձել է վերը նշված խնդրին, Վարդան Արևելցին է, ով նշում է, որ կաթողիկոս Հովհաննեսն ապստամբել էր Լևոն արքայի դեմ, որից վշտանալով թագավորը կաթողիկոս է նշանակում տեր Դավիթ Արքակաղնուն (Վարդան Արևելցի, էջ 187): Թեև Վարդան Արևելցին, ի տարբերություն նախորդ հեղինակների, մի փոքր ավել տեղեկություններ է հաղորդում և նշում է, որ Լևոնը Կիլիկիայում նոր կաթողիկոս է ընտրել, սակայն այսքանն էլ շատ քիչ է խնդրի պարզաբանման համար:

Վերը նշյալ խնդրին անդրադարձել է նաև Հեթում պատմիչը և նշել իր աշխատության մեջ այն անձանց անունները, ովքեր ձերբակալվել էին Լևոն Մեծագործի հրամանով. «ՈԾԶ (1207) Թագաւորն Հայոց Լեւոն կալաւ զՍեւաստիաւսն Հեռի որդաւքն եւ զԿոստանց Խումարտիաշն, եւ Ճալլինն եւ զՊաղտինն: Զտէր Յոհաննէս կաթողիկոսն ընկեցին յաթոռոյն եւ եդին կաթողիկոս Հայոց զտէր Դաւիթ Արքակաղնցի» (Մաթևոսյան, 2011, 49):

Հետազոտվող հարցի կապակցությամբ մեր պատմիչներից ամենից մանրամասնը տեղեկացնում է Սմբատ Սպարապետն իր «Տարեգրքում», համաձայն որի՝ հայոց արքայի և կաթողիկոսի բախման պատճառը այն էր, որ Կիլիկիայի հայոց արքան անհայտ պատճառներով բանտարկել էր Հովհաննես Սսեցու բարեկամներին (Սմբատ Սպարապետ, 215): Կաթողիկոսն իմանալով այդ մասին՝ գալիս է արքայի մոտ և խնդրում, որպեսզի վերջիններին ազատեն, սակայն Լևոն Մեծագործը մերժում է նրան (Սմբատ Սպարապետ, 215): Այս հակամարտությունն այն աստիճանի է սրվում, որ հայոց արքան և Կիլիկիայի իշխանները հրաժարվում են ճանաչել Հովհաննես Սսեցուն որպես Ամենայն հայոց կաթողիկոս և Կիլիկիայում ընտրում են նոր կաթողիկոսի՝ Դավիթ Արքակաղնեցուն, իսկ Հովհաննես Սսեցին միառժամանակ մնում է Հռոմկլայում (Սմբատ Սպարապետ, 215):

Ինչպես նկատում ենք, Սմբատը, ի տարբերություն մյուս պատմիչների, ավելի շատ կարևոր մանրամասներ է մեզ հաղորդում:

Ասպիսով՝ պետք է արձանագրել, որ Լևոն Մեծագործը անհավատարմության մեղադրանքով ձերբակալել է տալիս կաթողիկոս Հովհաննեսի քրոջ որդիներին: Բնականաբար կաթողիկոսը տեղեկանալով այդ մասին՝ գալիս է արքայի մոտ և պահանջում ազատ արձակել նրանց, քանզի, իր կարծիքով, իր ազգականները անմեղ են: Սակայն Լևոն Մեծագործն ընդառաջ չի գնում հայոց

հայրապետին, որից հետո Հովհաննեսը քաշվում է Հռոմկլայի բերդը և այլևս չի համագործակցում արքայի հետ:

Փաստորեն՝ երբեմնի դաշնակիցները և բարեկամները դառնում են թշնամիներ, ինչը բնականաբար կարող էր բացասաբար ազդել Կիլիկիայի հայոց թագավորության կառավարման համակարգի, ինչպես նաև պետության և եկեղեցու հարաբերությունների վրա:

Ստեղծված պայմաններում Հովհաննես Սսեցին քաշվեց Հռոմկլայի բերդաքաղաք, ուր գտնվում էր կաթողիկոսարանը, իսկ հայոց արքան Կիլիկիայի թագավորությունում կաթողիկոս օծեց Արքակաղնի վանքի առաջնորդ Դավիթին, ով պատմության մեջ հայտնի է ԴավիթԱ րքակաղնեցի անունով: Հիշյալ իրադարձությունների վերաբերյալ տեսակետ է առաջ քաշում նաև Բակուրանը, համաձայն որի՝ Լևոն արքան մի քանի եպիսկոպոսների խորհրդով միայն Սսի մեջ կաթողիկոս ընտրեց Դավիթ եպիսկոպոսին (Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, 84): Չի բացառվում, որ նրանք այն հոգևորականներն են եղել, որոնք թշնամացած են եղել հայոց կաթողիկոսի հետ:

Նշենք նաև, որ վերջինիս իրականում տրված էր միայն Կիլիկիայի հայոց պետության տարածքում հոգևոր կյանքի տնօրինումը: Մի որոշակի ժամանակահատված Հռոմկլայի հայրապետանոցի և Կիլիկիայի հայկական պետության միջև կապը կտրվում է: Բնականաբար եկեղեցու երկպառակտումը չէր կարող նպաստել երկրի զարգացմանը և այս վիճակը տևեց մի քանի տարի: Ինչպես նշում է հետազոտողներից Ա. Հովհաննիսյանը, սա արդեն երկրորդ դեպքն էր, երբ Լևոն Մեծագործը լուրջ ընդհարում էր ունենում եկեղեցու ղեկավարի հետ (Հովհաննիսյան, 2019, 107): Այսինքն՝ Լևոն Մեծագործի և հայոց կաթողիկոսի առաջին բախումը տեղի ունեցավ 1190-ական թվականներին՝ կապված Գրիգոր Քարավեժի գործունեության հետ, իսկ այժմ էլ երբեմնի մտերիմ և զինակից Հովհաննես Սսեցու: Նույն հետազոտողի պնդմամբ՝ Հովհաննես Սսեցին, ով ժամանակին Լևոն Մեծագործի հրամանով բերման էր ենթարկել Գրիգոր Ե Քարավեժին, այժմ ինքն է հայտնվում խիստ աննպաստ վիճակում (Հովհաննիսյան, 107): Ինչ վերաբերում է Դավիթ Արքակաղնեցու կարճատև աթոռակալմանը, ապա միջնադարյան պատմիչների երկերում չեն պահպանվել որևէ տեղեկություններ երկկողմ հարաբերությունների պատմության վերաբերյալ, սակայն շատ հավանական կարող է լինել այն, որ Դավիթը համերաշխորեն համագործակցել է հայոց արքայի հետ և աջակցել է վերջինիս պետական-քաղաքական կառավարման համակարգում:

Շատ կարևոր է նաև նշել, որ պատմական այս նույն ժամանակաշրջանում բավական ամուր կապեր էին ստեղծվել Կիլիկիայի հայկական թագավորության և հյուսիսարևելյան Հայաստանի իշխանների և հոգևորականների միջև: Եվ հավանաբար հենց դա էր պատճառը, որ շուտով Զաքարե ամիրսպասալարը Մխիթար Գոշի խորհրդով դիմում է Կիլիկիայի թագավոր Լևոն Մեծագործին և հայոց կաթողիկոսին՝ խնդրելով թույլ տալ օգտագործել շարժական սեղան և օգտվել համապատասխան եկեղեցական բարենորոգումներից. «Մեծ սպարապետի և շահնշահ արևելեան կողմանցն Զաքարիայ, ի խնդիր եղեալ եղծեալ և աղաղակեալ կարգաց քրիստոնէից, որ ի ստրկութենէ այլասեռից, ժողով արարեալ վարդապետաց և եպիսկոպոսաց, և հարց , և երիցանց, որք քննեալ գտին զխնդիրս նորա համաձայն աստուածային գրոց: Ապա առաքեաց առ քրիստոսապսակ արքայն հայոց Լևոնը, որ ի կողմանս արևմտից յաշխարհին Կիլիկեցւոց…» (Կիրակոս Գանձակեցի, 169-170): Հետաքրքիր է նաև նշել, որ երբ Մխիթար Գոշը դիմեց Լևոն

արքային և կաթողիկոսին, այդ պահին նրանք գժտված էին, և Կիլիկիայի հոգևոր կյանքը ղեկավարում էր Դավիթ Արքակաղնեցին, ում և արքայի մասնակցությամբ էլ տեղի ունեցավ հիշյալ եկեղեցական ժողովը: Ցավոք, պատմագիտության մեջ չկա միասնական կարծիք ժողովի գումարման թվականի շուրջ, և շրջանառվում են տարբեր թվականներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված խնդիրը մեր հետազոտության շրջանակներից դուրս է, ուստի մենք նպատակահարմար չենք գտնում խորանալու մանրամասների մեջ:

Ի վերջո, մայրաքաղաք Սսում տեղի ունեցած ժողովը հաստատում է ութ դրույթներից բաղկացած որոշումը, որոնց մասին բացառիկ վկայություններ է հաղորդում պատմիչ Կիրակոս Գանձակեցին, և դրանք ուղարկում են Զաքարե ամիրսպասալարին և հյուսիարևելյան Հայաստանի հոգևորականությանը. «Եւ նորա ժողով արարեալ ի մայրաքաղաքն Սիս զկաթողիկոսն Դավիթ հանդերձ վարդապետօք և եպիսկոպոսօք և ճգնաւոր միանձամբք, գտին զխնդիրս նորա համաձայն առաքելական կանոնաց, և ոչ արտաքոյ: Վասն որոյ գլուխս կանոնաց դրոշմեալ առաքեցին թուով ութ, որ են այսոքիկ…» (Կիրակոս Գանձակեցի, էջ 169-170)[1]:

Թեև Սսի ժողովը նմանատիպ որոշում ընդունեց, այնուամենայնիվ այդ կանոնները Հայաստանում բուռն ընդդիմության արժանացան: Կարելի է ասել, դրանց հաստատման համար Լոռեում և Անիում Զաքարեի նախաձեռնությամբ հրավիրված եկեղեցական ժողովներն ապարդյուն են անցնում (Թորոսյան, 2010, 20-44, Գևորգյան, 218-227):

Խոսելով պետության և եկեղեցու համագործակցության մասին, նշենք, որ մոտավորապես 1210 թվականին Սմբատ Սպարապետի վկայմամբ, Լևոն Մեծագործը Դրազարկի ղեկավար Հեթում-Հեղիին գործուղում է արևմտյան Եվրոպա՝ Հռոմի պապի և գերմանական կայսեր մոտ՝ խնդրելով նրանցից թագ ուղարկել իր որդեգրին՝ Ռուբեն-Ռայմոնդին: Հեթում-Հեղին արքայի հանձնարարությունը կատարում է մեծ պատվով և որոշ ժամանակ անց վերադառնում է Կիլիկիայի հայկական թագավորություն Ռուբեն-Ռայմոնդի համար նախատեսված թագով (Սմբատ Սպարապետ, 217, Ակինյան, 1956, 116-130):

Մոտավորապես 1211 թ. մահացավ կաթողիկոս Դավիթ Արքակաղնեցին, որից հետո Լևոն Մեծագործը Կիլիկիայում նոր կաթողիկոսի ընտրություն չանցկացրեց: Նա բանակցեց Հովհաննես Սսեցու հետ և հաշտվելով նրա հետ՝ ճանաչեց վերջինիս որպես Ամենայն հայոց կաթողիկոսի, ինչը, կարծում ենք, շատ կարևոր նշանակություն ունեցող քայլ էր պետության ամրապնդման համար: Կիրակոս Գանձակեցին անդրադառնալով այդ իրադարձություններին՝ նշում է, որ եկավ նաև հայոց Հովհաննես ապստամբ կաթողիկոսը, որ Հռոմկլայում էր, հաշտվեցին միմյանց հետ, երբ Արքակաղնում գտնվող Դավիթը վախճանված էր. «եկն և ապստամբ կաթողիկոսն հայոց Յովհաննէս, որ ի Կլայն Հռոմայական, և հաշտեցան ընդ միմեանս, իբրև վախճանեալ էր տէր Դաւիթ, որ Արքակաղնին…» (Կիրակոս Գանձակեցի, էջ 187): Բացի այդ, Սմբատի վկայմամբ՝ արքան բոլոր այն տարածքներն ու հողակտորները, որ խլել էր, վերադարձրեց կաթողիկոսին:

1218 թվականին մահացավ Հեթում-Հեղին՝ Դրազարկի վանահայրը, որից հետո, հայոց արքայի կարգադրությամբ, Դրազարկը նույնպես հանձնվեց հայոց կաթողիկոս Հովհաննես Սսեցու

[1] Նշված թեմային որոշակիորեն անդրադարձել է նաև Դ. Գևորգյանը (Գևորգյան, 2018, 218-227):

տնօրինությանը (Արշամյան, 1994, 59)։ Այս դեպքից հետո մենք այլևս մինչև Լևոն Մեծագործի մահը չենք տեսնում որևէ խնդիր պետության և եկեղեցու հարաբերություններում։ Դեռ ավելին՝ միջնադարյան պատմիչների վկայություններից իմանում ենք, որ Լևոն Մեծագործը և կաթողիկոս Հովհաննես Սսեցին ամուր կերպով պայքարել են Կիլիկիայի հայոց թագավորության բարգավաճման և հզորացման համար։

Հայոց կաթողիկոսի և հայոց արքայի մտերմությունն այնքան մեծացավ, որ Կիլիկիայի հիմնադիր արքան իր մահվանից առաջ իր դստեր՝ Զաբելի խնամակալներց մեկին նշանակեց հենց կաթողիկոս Հովհաննես Սսեցուն։ Այդ մասին որոշակի մանրամասներ է ներկայացնում պատմիչ Կիրակոս Գանձակեցին, համաձան որի՝ Լևոն Մեծագործը մահվանից առաջ իր մոտ կանչեց Հովհաննես կաթողիկոսին և բոլոր զորագլուխներին՝ իրենց զորքերով (Կիրակոս Գանձակեցի, 187-188)։ Արքան հանձնարարեց կաթողիկոսին ու բոլոր իշխաններին, որ իր փոխարեն իր դստերը թագավորեցնեն, հնազանդ մնան ու հավասարաստիճան մարդու հետ ամուսնացնեն։ Նրան հանձնեցին կաթողիկոսին ու երկու մեծամեծ իշխանների՝ իր ազգական Կոստանդինին ու իշխան Ատանին։

Ինչպես նկատում ենք, Կիրակոս Գանձակեցին կարևոր տեղեկություններ է հաղորդում Լևոն Մեծագործի հետ կապված։ Այս դեպքից որոշ ժամանակ անց ՝ 1219 թվականի մայիսի 2-ին, մահանում է Լևոն Մեծագոծը՝ սերունդներին թողնելով մի բարգավաճ և հարուստ թագավորություն, իսկ կաթողիկոս Հովհաննես Սսեցին պատշաճ կերպով իրականացնում է հայոց արքայի թաղումը. «Այսպէս հանգեաւ ի բարեպաշտութեան քաջն և յաղթողն ամենայնի Լևոն արքայ…» (Կիրակոս Գանձակեցի, 188)։

Եզրակացություն: Այսպիսով՝ պետք է նշել, որ թեև 1198-1219 թվականներին ժամանակ առ ժամանակ որոշակի լարվածություններ էին առաջանում Կիլիկիայի հայկական պետության և Հռոմկլայի կաթողիկոսարանի միջև, սակայն ընդհանուր առմամբ, նշյալ տարիներին հիմնականում Հայոց եկեղեցին կարողացավ զարգանալ, համագործակցեց թագավորական իշխանության հետ, ինչը նպաստեց պետության բարգավաճմանը։ Բացի այդ, Հայոց եկեղեցին և մասնավորապես Հռոմկլայի կաթողիկոսարանն ակտիվորեն մասնակցեցին Կիլիկիայի հայոց թագավորության կառավարմանը, ընդ որում՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությանը։ Նշենք նաև, որ պետություն-եկեղեցի համագործակցության արդյունքում երկրի տարբեր նահանգներում և խոշոր քաղաքներում կառուցվեցին մեծ քանակությամբ վանական համալիրներ, եկեղեցիներ, հոգևորականներին տրվեցին որոշակի հողակտորներ, ինչը բնականաբար էականորեն նպաստեց եկեղեցական կյանքի աշխուժացմանը։ Այդ նույն ժամանակահատվածում զարգացան նաև միջեկեղեցական հարաբերությունները՝ ի մասնավորի հայ-հունական, հայ-ասորական, ինչպես նաև հայ-կաթոլիկ։

Գրականության ցանկ

Ալիշան Ղ. , Սիսուան, Վենետիկ, Սբ. Ղազար, 1885, 204 էջ։

Ակինյան Ն., Ներսես Լամբրոնացի, կեանքն ու գրական վաստակները, հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթումեաց, Վիեննա, Մխիթարեան տպ., 1956, 472 էջ:

Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, Ասորական աղբյուրներ, թարգման. բնագրից, առաջաբան և ծանոթագրութ.՝ Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 263 էջ:

Ավետիսյան Վ., Հույն (բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին, «Բանբեր Մատենադարանի», թ. 33, Երևան, ՄՄ հին ձեռ. ինստ., 2022, 366-377 էջեր:

Արշամյան Հ., Կիլիկյան Հայաստանի բերդատեր իշխանները XII դարի վերջին և XIII դարի սկզբին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, ԵՊՀ հրատ., 1994, թ. 3, էջ 50-65:

Բոզոյան Ա., Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ, 1988, 270 էջ:

Գևորգյան Դ., Հայ-վրացական եկեղեցական հարաբերությունները կարգավորելու Զաքարե ամիրսպասալարի փորձերը, «Պատմություն և մշակույթ», հ. գ, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 201-226:

Թորոսյան Վ., Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովները, «Հայոց պատմության հարցեր», Երևան, ՀՀ ԳԱԱ Պամ. Ինստ., 2010. հ. 11, էջ 20-44:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատ.՝ Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Հայան ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, 407 էջ :

Կղեմես Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, Հ. Ա, Հռոմ, Ուրբանեան տպ., 1690, 177-185 էջեր:

Հակոբյան Գ. , Ներսես Լամբրոնացի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971, 372 էջ:

Հայոց պատմություն, ակադեմիական հրատարակություն, հատոր բ (4-րդ դար-17-րդ դարի առաջին կես), Երևան, 2014:

Հովհաննիսյան Ա. , Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, Հեղինակ. Հրատ., 2020, 218 էջ:

Հովհաննիսյան Ա., Լևոն Մեծագործի և Լամբրոնի Հեթումյանների հարաբերությունների պատմությունից, «Տարեգիրք» աստվածաբանության ֆակուլտետի, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 229-236:

Մաթևոսյան Կ. , Հեթում պատմիչ Կոռիկոսցին և նրա ժամանակագրությունը, Երևան, 2011, 112 էջ:

Մաթևոսյան Կ., Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր մագիստրոս, Երևան, 2015, 146 էջ:

Մի տեսութիւն Կիլիկիոյ հայկական իշխանութեան վրայ, գրեց Բակուրան, Վ. Մ. Քիւրճեան, Պէյրութ, 1959:

Միքայել Ասորի, Ժամանակագրութիւն հայոց, Երուսաղէմ, 1870:

Մութաֆյան Կ. , Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, 630 էջ:

Յովհաննէս Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատ.՝ Բ. Չուգասզյանի, Երևան, 1974:

Պետրոսյան Ե., Հայ եկեղեցու պատմություն, Մաս Ա., սկզբից մինչև 1441 թվականը, Հաղպատավանք, 1990:
Պերպերյան Հ., Անանիա հակաթոռ կաթողիկոս, «Սիոն» հանդես, 1964, հոկտեմբեր, էջ 286-289:
Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, 155 էջ:
Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, 286 էջ:
Սուքիասյան Ա., Կիլիկիայի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, 389 էջ:
Վահրամ Ռաբունի, Պատմութիւն Ռուբենիոյ, Փարիզ, 1859, 185 էջ:
Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Վենետիկ, 1862, 205 էջ:
Վարդանյան Վ., Պահլավունիները հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ, Երևան, 2008, 234 էջ:
Օրմանյան Մ. , Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001:
Brocarduc, Direction ad passagium Faciiendum in: Recueil des Historiens des Croisades, doc Armeniens, t. II, Paris. 1907.
Grousset R., L Empire du Levant, Paris, 1949.